

Եւ սարկաւագացն: 25 Չի նմա այսպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեճուկս Ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն թշնամութեանն՝ զոր ունէր ընդ նմա: 26 Եւ զայն ոչ ածեր զմտաւ՝ թէ զանձն կորուսանէ: Եւ ի ժամանակին նուաղէին ամենայն կարգք եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Յայոց:

ԳԼՈՒԽ ԼԲ.

1 Յաղագս թագաւորին Պապայ թէ ո՛րպէս խոտորեցան ի թագաւորէն Յունաց, կամ ո՛րպէս սպանաւ ի զաւրացն Յունաց:

2 Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ եւ խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, եւ կամեցաւ խառնել զսէր իւր եւ առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: 3 Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, եւ արծակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան: 4 Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ Կեսարիաւ հետ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. եւ զՂուռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տուր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ: 5 Այլ Մուշեղ եւ ամենայն իշխանքն Յայոց շատ եղին ի մտի արքային, զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց. եւ ոչ անսաց նոցա, եւ յայտնեաց զթշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց:

6 Այլ իշխանքն Յունաց եւ զաւրքն նոցին տակաւին էին յերկրին Յայոց. եւ անուն իշխանացն՝ միումն Տերէնտ, միւսումն Ադէ: 7 Եւ յղեաց դեսպան մի զաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զաւրացն իւրոց՝ որ էին յերկրին Յայոց, եւ հրաման տայր սպանանել զթագաւորն Յայոց զՊապ: 8 Եւ եղել իբրեւ ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Յայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել զթագաւորն Յայոց զՊապ: 9 Եւ եղել ի դիպան ժամանակի իբրեւ գիտացին Տերէնդն եւ Ադէն զաւրավարքն զաւրացն Յունաց՝ թէ միայն է թագաւորն Յայոց Պապ, եւ ամենայն մեծամեծքն եւ զաւրքն Յայոց չէին անդ, եւ էր թագաւորն Յայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրաւանդ զաւառի ի Խու անուն տեղւոյն, եւ բանակ զաւրացն Յունաց բանակեալ էր անդէն մաւտ առ բանակին Յայոց արքային. ապա զաւրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ թագաւորն Յայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս արէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել. եւ առնէին կազմութիւն պատրաստութեան:

10 Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել եւ յըմբել: 11 Եւ իբրեւ մտանէր արքայն ի խորանն Տերէնդի զաւրավարին Յունաց, եւ լեզեոն սպարակիր հետեւակն վահան ի ձեռն, սակուր զգաւտոյ, շուրջ ի